ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2025 թվականի N 44 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1818-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՄԱՆԿԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1818-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) աղյուսակի 4-րդ կետի «Անվանումը» սյունակում «Խաղալիք տիկնիկի ձայներ արտաբերող և լուսարձակող պլաստմասե մասեր» բառերը փոխարինել «Խաղալիք տիկնիկի ձայներ արտաբերող և լուսարձակող պլաստմասե մարտկոցով» բառերով.

2) 4-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնուակում «Ինտերակտիվ փափուկ խաղալիքների համար» բառերը փոխարինել «Ինտերակտիվ տիկնիկների արտադրության համար» բառերով.

3) 8-րդ կետի «Անվանումը» այնուակում «Սինթետիկ գործվածքի տես. մինչև 85% սինթետիկ թելերի պարունակությամբ, բամբակյա թելերի խառնուրդով» բառերը փոխարինել «Սինթետիկ գործվածքի տես. մինչև 85 % սինթետիկ թելերի պարունակությամբ ներկված բամբակյա թելերի խառնուրդով» բառերով.

4) 14-րդ կետի «Անվանումը» այնուակում «Սինթետիկ գործվածք, մինչև 85% սինթետիկ թելերի պարունակությամբ ներկված բամբակյա թելերի խառնուրդով» բառերը փոխարինել «Սինթետիկ գործվածք, մինչև 85% սինթետիկ թելերի պարունակությամբ տպված բամբակյա թելերի խառնուրդով» բառերով.

5) 19-րդ կետի «Անվանումը» այնուակում «Կայծակաճարմանդ» բառը փոխարինել «Կայծակաճարմանդ պլաստմասե ատամիկներով» բառերով.

6) 19-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնուակում «Պլաստիլիներով խաղալիքների արտադրության համար» բառերը փոխարինել «Խաղալիքների արտադրության համար» բառերով.

7) 20-րդ կետի «Անվանումը» այնուակում «Կայծակաճարմանդ» բառը փոխարինել «Կայծակաճարմանդի մասեր՝ պլաստմասե գլխիկներ» բառերով.

8) 20-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնուակում «Պլաստիլիներով խաղալիքների արտադրության համար» բառերը փոխարինել «Խաղալիքների արտադրության համար» բառերով.

9) 21-րդ կետի «Անվանումը» այնուակում «Կայծակաճարմանդ» բառը փոխարինել «Կայծակաճարմանդի մասեր՝ պլաստմասե գլխիկներ ոչ թանկարժեք մետաղից» բառերով.

10) 21-րդ կետի «Տեխնիկական բնութագիրը» այնուակում «Պլաստիլիներով խաղալիքների արտադրության համար» բառերը փոխարինել «Խաղալիքների արտադրության համար» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.01.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ